

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԻՆՏԵՆՍԻՎՈՒ-  
ԹՅԱՆ ԵՐԱՇՏԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ  
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն հավելվածով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման ցուցանիշները և կիրառվող մեթոդաբանությունը:

2. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության չորայնության ցուցիչների տեղեկագրում ընդգրկված Սելյանինովի հիդրոթերմիկ խոնավության գործակիցը և մեթոդաբանությունը կիրառելի են Հայաստանի Հանրապետության տարածքում տարբեր ինտենսիվության երաշտային պայմանների հաշվարկման համար:

3. Սույն հավելվածի իմաստով կիրառվող հասկացություններն են՝

**1) Սելյանինովի հիդրոթերմիկ խոնավության գործակից** (այսուհետ՝ ՀԹԳ, [մմ/<sup>0</sup>С])՝ գործակից, որը հաշվարկվում է չորրորդ ենթակետում բերված բանաձևով.

**2) ցուցանիշ՝** օդերևութաբանական պարամետրեր, որոնք օգտագործվում են երաշտի պայմանների հաշվարկման համար.

**3) երաշտի ինտենսիվություն՝** որոշակի ժամանակահատվածում կոնկրետ տեղանքի չորության վիճակ, որը գնահատվում է օդերևութաբանական կայանների դիտարկումներից ստացված համապատասխան ցուցանիշների կիրառմամբ.

**4) հարակից տարածքներ՝** օդերևութաբանական կայանների դիտարկումներից դուրս տարածքներ:

4. Երաշտային պայմանների հաշվարկման հիմնական ցուցանիշներն են տեղումները և ջերմաստիճանը:

5. ՀԹԳ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\zeta_{\text{ԹԳ}} = \frac{\sum R}{0.1 \sum T}$$

Որտեղ՝

$\sum R$  – մթնոլորտային տեղումների քանակի գումարն է գնահատվող տասնօրյակի և դրան նախորդող երկու տասնօրյակների համար,

$\sum T - 10^{\circ}\text{C}$  -ից մեծ կամ հավասար միջին օրական ջերմատիճանների գումարն է գնահատվող տասնօրյակի և դրան նախորդող երկու տասնօրյակների համար:

6. Սելյանինովի  $\zeta_{\text{ԹԳ}}$ -ի արժեքների հիման վրա Հայաստանի կլիմայական պայմաններում առանձնացվում է երաշտի ինտենսիվության 5 կարգ՝

1) շատ ուժեղ 0-0.19 (կարգ 1).

2) ուժեղ 0.2-0.39 (կարգ 2).

3) միջին 0.4-0.6 (կարգ 3).

4) թույլ 0.61-0.75 (կարգ 4).

5) երաշտի բացակայություն 0.76-5.0 (կարգ 5):

7. Հայաստանի կլիմայական պայմաններում տարվա տաք ժամանակահատվածում՝ պայմանավորված Հայաստանի լեռնային ռելիեֆով, տեղային տեղումներով և կոնվեկտիվ պրոցեսներով, երաշտի ինտենսիվության ճշգրիտ գնահատման համար լրացուցիչ իրականացվում է սինօպտիկական իրավիճակի, օդերևութաբանական ռադարի և արբանյակային դիտարկումների վերլուծություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Բ. ԲԱԴԱԼՅԱՆ